

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 3(18/19)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտիտական խորհրդի 26.11.18 թ.կայացած նիստի

խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 29-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ`

1. **Ֆակուլտետի դեկան Խ.Վ. Ներկարարյանի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:**
2. **Ընթացիկ հարցեր:**

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..

Լսեցին Ֆակուլտետի դեկան Խ.Վ. Ներկարարյանի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ. Ներկարարյանը բացեց խորհրդի նիստը: Նիստը նախագահելու համար բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Ս. Հարությունյանը:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ. Ներկարարյանը զեկուցեց 2017-2018 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ: Ձեկուցողը մանրակրկիտ ներկայացրեց այդ ժամանակահատվածում ուսումնական, գիտական, մեթոդական և կազմակերպչական ուղղությամբ ֆակուլտետում կատարված աշխատանքները, նշեց ձեռքբերումներն ու հրատապ լուծում պահանջող խնդիրները: Մասնավորապես նշվեց, որ Ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 359, որից 301-ը սովորում են բակալավրիատում, իսկ 58-ը` մագիստրատուրայում: Առաջին կուրս ընդունվել են 48 դիմորդ, որից 32-ը` ռադիոֆիզիկա, 7-ը` կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա և 9-ը` հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում ուղղություններով: Դասախոսական հաստիքների ընդհանուր քանակը` ներառյալ ժամավճարները 24 է, այդ թվում` 10-պրոֆեսոր, 13-դոցենտ, 4 ասիստենտ և 2 դասախոս: Ընթացիկ տարում ֆակուլտետում պաշտպանվել են երկու թեկնածուական թեզեր:

Ընթացիկ տարում հստակեցվեց ֆակուլտետում գործող հինգ ամբիոններից երկուսի` որպես թողարկող ամբիոններ, մասնագիտական ուղղվածությունը: Դրանով իսկ ավարտուն տեսք ստացավ ֆակուլտետի նախընտրած կուրսը դեպի էլեկտրական և էլեկտրոնային ինժեներիա, որն ինչպես հայտնի է անմիջական կապի մեջ է համակարգչային տեխնոլոգիաների հետ:

Նշվեց նաև, որ վերջերս ֆակուլտետում ներմուծվել է աշխարհում տարածված փոքր սեմինարների եղանակը: Դա հետազոտությունների որոշակի ուղղությամբ զբաղվող գիտնականների, ասպիրանտների և ուսանողների աշխատակարգ է, երբ իմի է բերվում նախորդ շաբաթվա ստացված արդյունքներն ու նախանշվում են հաջորդ շաբաթվա անելիքները:

Ելույթ ունեցողը միաժամանակ պատասխանեց ներկաների կողմից առաջադրված հարցերին:

Արտահայտվեցին.- ամբիոնների վարիչներ ՅՅ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռ.Մ. Մարտիրոսյանը և Վ.Ս.Յարությունյանը, պրոֆ. Ա.Ժ Բաբաջանյանը, ինչպես նաև, դոցենտ Ա.Յ. Մակարյանը, պրոֆ Յ.Ն. Ավետիսյանը, պրոֆ Ա.Ա. Հախումյանը և այլ աշխատակիցներ: Արտահայտվողները դրական գնահատական տվեցին դեկան Խ.Վ. Ներկարարյանի մեկ տարվա գործունեությանը և բարձրացրեցին իրենց հուզող հարցերը:

Համալսարանի պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը նույնպես դրական գնահատելով դեկանի մեկ տարվա գործունեությունը, մանրամասն պատասխանեց նաև ներկաներին հուզող հարցերին:

Ասվեց, որ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում կատարված աշխատանքները, ուսումնական, գիտական ու կազմակերպչական ոլորտներում ֆակուլտետի հաջողություններն հիմք են տալիս դրական գնահատել դեկանի գործունեությունը և հավանություն տալ հաշվետվությանը:

Որոշեցին.- Բաց քվեարկության հիման վրա միաձայն հավանություն տալ դեկան Խ.Վ. Ներկարարյանի հաշվետվությանը՝ 2017-2018 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և դրական գնահատել այդ ժամանակահատվածում նրա գործունեությունը:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Մ. Հարությունյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու հարցը:

Արտահայտվեցին – ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանը: Ներկայացվեց նրա անցած ուղղու որոշ մանրամասներ, որպես կրթության, գիտության նվիրյալ անձի, որն իր աշխատանքային գործունեության ընթացքում ցուցաբերել է հետևողականություն ու սկզբունքայնություն: Վ. Մ Հարությունյանը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս է, ունի 42 տարվա գիտամանկավարժական ստաժ, որից 41–ը՝ ամբիոնի վարիչի պաշտոնում: Նա Հայաստանում կիսահաղորդիչների ֆիզիկայի և նանոէլեկտրոնիկայի ուղղության հիմնադիրներից է՝

դասագրքերի և ձեռնարկների հեղինակ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են ավելի քան 36 գիտությունների թեկնածուներ և դոկտորներ:

Որոշեցին- Համալսարանի գիտական խորհրդին ներկայացնել Վ. Ս. Հարությունյանին ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու առաջարկը:

Օրակարգը սպառված է:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝

Խ.Վ. Ներկարարյան

Գիտքարտուղար, ֆ.մ.գ.թ՝

Մ.Ս. Ալեքսանյան